Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

29127



ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԽՈՐՀՐԴՈՑ

ՍՐԲՈՑ ՊԱՏԱՐԱԳԻ

ըստ ծիսի

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Քաղեալ եւ աշխատասիրեալ

ՑԵՂԻՍ. ԱՒԱԳ ՔԱՀԱՆԱՅԷ ՇԱԲՇՆԻԲԵԱՆՑ.

Ի պէտս աշակերտաց դպրոցաց քաղաքիս.

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆ
Տպարան Սերովբէ Աւագեանի.
1901.

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԽՈՐՀՐԴՈՅ

ՍՐԲՈՅ ՊԱՏԱՐԱԳԻ

ըստ ծիսի

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ Ս. ԵԿԵՂԵՅԻՈՅ

Քաղեալ և աշխատասիրեալ

ՅԵՂԻԱ ԱՒԱԳ ՔԱՀԱՆԱՅԷ ՇԱՐՇԵՒԵԱՆՑ.

Ի պէտս աշակերտաց դպրոցաց քաղաքիս

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆ
Տպարան Մէրովբէ Աւագեանի
1901.

Дозволено цензурою, С.-Петербургъ 30 Мая 1901 г.

29127

ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ.

Հարկաւոր համարելով կազմել այս համառօտ և ընտիր քաղուածքս ի մատենից Հայոց ժամակարգութեանց՝ որ կոչի մեկնութիւն արարողութեան Սրբոյ Պատարագի Հայաստանեայցս եկեղեցւոյ, ի պէտս աշակերտաց մանկանց Դպրոցաց հայոց, նուիրեմ իբրև օգտաբեր յիշատակ ըստ պարզութեան ոճոյն, և բարբառին տեղւոյս Նոր Նախիջևան քաղաքի առ ի դիւրութեամբ հասկանալոյ։

Բ 511.

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Պատարագն կը բաժանուի երկու մասն. պատարագ երեխայից, եւ պատարագ հաւատացելոց պատարագ երեխայիցն է Օրհնեալ թագաւորութեանէն մինչեւ յողջոյնն. պատարագ հաւատացելոցն է յողջունէն՝ մինչեւ ի վերջն կամ աւարտումն. իսկ Խորհուրդ խորհնէն մինչեւ ի Օրհնեալ թագաւորութիւնն, է նախապատրաստութիւն կամ սկիզբն պատարագին:

Պատարագն կը մատուցանուի՝ ա. Աստուծոյ փառաբանութիւն տալոյ համար, բ. մեր մեղաց թողութիւն խնդրելոյ իբրեւ զոհ քաւութեան, գ. զոհութիւն եւ շնորհակալութիւն տալոյհամար, դ. պէսպէս հայցուածքներու համար, վասն կենդանեաց եւ ննջեցելոց:

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՅ ՊԱՏԱՐԱԳԻ

ԸՍՏ ԾԻՍԻ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑՒՈՅՑ.

ՍԿԻԶԲՆ ԿԱՄ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ.

ԳԼՈՒԽ Ա.

Հ. Ի՞նչ է պատարագն.

Պ. Պատարագն է անարիւն զոհ մարմնոյ և արիւն Քրիստոսի, կամ մատաղ, որ կը մատուցանուի Հօր Աստուծոյ ըստ օրինակի Աբելի, Նոյի և Աբրահամու։ Պատարագն կարելի է մատուցանել ամենայն օր՝ բացի աւաղաւորաց շաբաթէն և ի մեծ պահոց հասարակ օրերէն, որ կը լինի միայն շաբաթ օր և կիւրակէն։ Պատարագը կարելի է մատուցանել եկեղեցւոյ մէջ սեղանի վերայ, իսկ արտաքոյ եկեղեցւոյն չի կարելի մատուցանել՝ բացի ստիպեալ հարկէն, յատուկ օծուած (վէմ) քարի մը վերայ այն ալ մարդուր տեղ կամ տաղաւարի մէջ։ Պատարագը կարող է մա-

տուցանել քահանայական կարգ ունեցողը, որ մատուցանելէն առաջ կը հագնի նոր զգեստներ, որոնք են—սաղաւարտ, վակաս, շուրջառ, փորուրար, թեւնոց, գօտի և այլն: Իսկ սարկաւագը կը հագնի շապիկ և ուրար. քահանայն ամեն զգեստ հագնելու ժամանակ աղօթք կասէ և զգեստաւորուելէն ետև կուգայ Ատեանը, լուացումն կանէ և պատշաճաւոր աղօթքները և սաղմոսները ասելէն ետև, կելնէ բեմը, ուր որ սեղանն է և այնտեղ սպաս կը դնէ:»

Հ. Ժամարարը ինչպէս կը դնէ սպասը.

Պ. Ժամարարը կերթայ ընծայարանի կամ խորհրդանոցի մօտ, այնտեղ կառնու ձեռքը սպասը և խաչակնքելով կասէ. «յիշատակ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» և կը դնէ սպասը մաղզմանին վրայ: Յետոյ կառնու գինին, կարկանէ սկիհի մէջ և կասէ: «յաղագս յիշատակի փրկագործ անօրէնութեան Տեառն մերոյ Յիսոոսո Քրիստոսի»: Այս ասելով Քրիստոսի ասած խօսքը կը կատարուի, որ պատարագի խորհուրդը հաստատած ժամանակը աշակերտացը ասաց թէ «զայս արարէք առ իմոյ յիշատակի»: Անկից ետքը քահանան «Տէր Թագաւորեաց» սաղմոսը ասելով՝ քօղօվ կը ծածկէ սկիհն և մաղզմանը, յետոյ սարկաւագը կը մատուցանէ բուրվառը ժամարարին և ժամարարն խընկարկելով սեղանէն վար կիջնի աշխարհը ման գալու և բոլոր եկեղեցւոյ մէջ խնկարկելով կրկին բեմը կելնէ և կսկսի պատարագի սկիզբն անել. քահանային բուրվառով սեղանէն կամ բեմէն վար իջնելը կը նշանակէ Քրիստոսի երկնքէն աշխարհ գալը և դարձեալ անօրինական խորհուրդները կատարելէն ետքը նորէն երկինք համբառնալը:

Հ. Ի՞նչ է խորանը և սեղանը.

Պ. Խորանը—որ է սրբութիւն սրբոց օրինակն է երկնքի, ուր կընակի Աստուած, սեղանն է այն, որու վերայ որ

պատարագ կը մատուցանուի, իսկ տաճարն երկնքի հաւասար. ժողովուրդը որ կը գտնուի տաճարին մէջը, նման է երկնքի հաւասար հրեշտակաց: Խնկարկելը կը նշանակէ թէ աղօթքը կը մատուցանուի Հօր Աստուծոյ, որովհետև խունկի ծուխն կելնէ դէպի վեր, որ է պատարագն և աղօթքնըրանաւոր:

ՊԱՏԱՐԱԳ ԵՐԵԽԱՅԻՑ

ԳԼՈՒԽ Բ.

Հ. Սկիզբն պատարագին ո՞րն է.

Պ. Սկիզբն պատարագին կսկսուի այսպէս. սարկաւագն ձայնիւ «Օրհնեա տէր». և քահանայն կասէ «Օրհնեալ թագաւորութիւն հօր». և այսպէս կլինի սկիզբն պատարագին: Քահանայն ինքը օրինակ է Քրիստոսի, որ եւ յերկինս և քահանայն է որ կը մաղթէ վասն ժողովրդոց, իսկ սարկաւագն իբրև թարգման ի դիմաց ժողովրդոց առ քահանայն և քահանայն առ Աստուած: Պատարագն կը բաժանուի երկու մասն «Երեխայից» և «Հաւատացելոց». սկիզբէն՝ մինչև ի ս պաս դնելը կասուի Նախապատրաստութիւն.

Ա. մասն է «Օրհնեալ թագաւորութենէն» մինչև ի «Ողջոյնը» որ կասուի պատարագ երեկայից, այսինքն՝ անապաշխարողաց. Բ. մասն է՝ յողջունէն մինչև ի վերջը, որ կասուի պատարագ հաւատացելոց, և այս միջոցին արժանաւորները կամ ապաշխարող ու խոստովանողները կը ճաշակուին՝ այսինքն սրբութիւն կառնեն։

Հ. Սուրբ Աստուած երգը ինչ կը նշանակէ.

Պ. Երբ որ սարկաւագը աւետարանը կը բարձրացնէ և կասէ «պատոսխումէ» որ ասել է վեր նայեցէք, այն ժամանակ դպիրները կը երգեն երեքսրբեան երգը ասելով «Սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ, որ խաչեցար վասն մեր ողորմեա մեզ». այս ձայնը լսելով ժողովուրդները վեր կը նային և կը տեսնեն Սուրբ Աւետարանը բարձրացուցած, որ է պատմիչ անօրէնութեան Քրիստոսի և ասով յայտնի կըլլայ, որ Քրիստոս ինքն երկնքէն իջաւ և եկաւ աշխարհ ինչպէս մէկ հասարակ մարդ մը և պատեցաւ աշխարհիս երեսը և ապա մտաւ իրեն երկնային փառքին մէջը, այսինքն համբարձաւ յերկինս և այս կասուի վերաբերումն։ Աւետարանը պատելէն ետքը կը համբուրէն Սուրբ Աւետարանը և անկից յետոյ սարկաւագն «վասն խաղաղութեան ամենայն աշխարհի» քարոզն կասէ և յետոյ ժամարարն ծածուկ աղօթքն խալսելէն ետքը դպիրքը կը կարդան աւուր պաշճի գիրքն մարգարէից և առաքելոց գրուածներէն։

Հ. Ի՞նչ կնշանակէ մարգարէից և առաքելոց գրուածքը և Աւետարան կարդալը եկեղեցւոյ մէջ պատարագի ժամանակ։

Պ. Մարգարէից գրուածքն է Քրիստոսի աշխարհ գալէն առաջ բոլոր անօրինական խորհուրդներուն մարգարէութիւն, իսկ առաքելոց գրուածքը կնշանակէ Քրիստոսի աշխարհ գալէն ետքը կատարուած խորհուրդները և աշխարքիս վերջի ըլլալիքը այսինքն արդարոց և մեղաւորաց համար ըլլալու դատաստանը. իսկ Սուրբ Աւետարանի կարդացուելը սարկաւագի բերնով կնշանակէ Քրիստոսի իրեն բերնի խօսքերը կամ ասածները յայտնել ժողովրդոց և քարոզել նոցա ևս Աւետարանը կնշանակէ նոյն ինքն Տէր մեր Յիսուս Քրիստոս, իսկ մարգարէքն ինչ որ գրեցին յառաջագոյն՝ առաքեալքն ևս անոր ականատես եղան և սպասաւորք Քրիստոսի և աշակերտք։

Հ. Ի՞նչ կնշանակէ Աւետարանէն ետքը «հաւատամքը».

Պ. Աւետարանը, ինչպէս ասինք, կնշանակէ Քրիստոսի Տեառն մերոյ բերնէն ելած խօսքերը, որ կը կարդացուի ժողովրդոց բեմին վերայէն և Աւետարանը աւարտելէն յետոյ ամենքն միաբերան կասեն «փառք քեզ Տէր Աստուած մեր», որ կնշանակէ թէ լսեցինք Աստուծոյ ձայնը և Աստուծոյ խօսքերը և արժանացանք այդ ձայնին, անոր համար կը հիանամք և փառք կուտանք Աստուծոյ։ Աւետարանը աւարտելէն յետոյ կը կարդացուի Նիկիական դաւանութիւնը, որ է Հաւատամքը. որուն մէջ կը պարունակուի Քրիստոսի խորհուրդներուն բացադրութիւնը,—Քրիստոսի աշխարհ գալը, մասնուիլը, չարչարուելը, խաչուիլը, թաղուիլը, յարութիւն առնելը և համբառնալը, և կրկին գալուստը. նոյնպէս և հաւատամքին մէջ կը պարունակուի Աստուածային Երրորդութեան խորհուրդը, որ մենք կը հաւատամք Քրիստոսի հօր Աստուծմէ ծնանիլը և անբաժան ըլլալը յետ մարդանալոյն։

Հ. Հաւատամքէն ետև ինչ կասուի.

Պ. Հաւատամքէն յետոյ կասուի «Եւ ևս խաղաղութեան» քարոզը, որ կը յորդորէ ժողովրդոց հաստատուն մնալ իրենց հաւատոյ և յուսոյ մէջ և խնդրել յԱստուծոյ Յիսուսէ Քրիստոսէ, որ նա արժանի անէ հաղորդել իւր սուրբ

մարմնոյ և արեանը և թէ իրկնց աղօթքը ընդունելի ըլլայ առաջի Աստուծոյ։ Այս քարոզէն ետքը կսկսուի ընծայարերութեան կարգը և ասկից յետոյ սարկաւագն կերգէ «Մի ոք յերեխայից» քարոզը։

Հ. Ի՞նչ կնշանակէ «Մի ոք յերեխայից» քարոզը.

Պ. Կնշանակէ թէ անոնք որ երեխայք են, այսինքն զեռ ևս մկրտուած չեն և կամ անոնք որոնք որ ապաշխարած չեն, ընծայն վերարերելու ժամանակը եկեղեցւոյ մէջ չի պիտի մնան, այլ դուրս պէտք է ելնեն, եկեղեցւոյ դուռը կամ գաւիթը կանգնեն և այնտեղ պէտք է աղօթք անեն։ Պատարագին սկիզբէն այսինքն «Օրհնեալ թագաւորութիւն» ասելէն մինչև մասն բերուելը, բոլոր աղօթքները կասուին ղէպի Քրիստոս, իսկ մասը բերելէն յետոյ աղօթքը կը դարձուի առ Հայրն Աստուած և այնուհետև քահանայն բոլոր իւր խնդրուածքը կը դարձնէ առ Հայրն երկնաւոր, աչքին առջևը ունենալով միջնորդ և պատարագ հաշտութեան Քրիստոսի մարմինը և արիւնը, որ կը մատուցանուի Հօր Աստուծոյ։

Հ. Ի՞նչ կնշանակեն «Մարմին տէրունական» և «Սաղմոս ասացէք» երգերը.

Պ. Մարմին տէրունականը այն է, որ շուտով վերարերում պէտք է ըլլայ և սուրբ մարմինը և արիւնը պէտք է բերուի և սեղանին վրայ պիտի դրուի ժողովրդեան աչքի առջև և հրեշտակներն ալ այս միջոցին աներևոյթապէս սպասաւորութիւն կանեն։ Մարմին տէրունականէն յետոյ կերգեն «Սաղմոս ասացէք» քարոզը, որ քաղցրութեամբ կերգեն դպիրքը ըստ աւուր պատշաճի սրբասացութիւնը։ Սրբասացութիւնը երգելու ժամանակ սարկաւագն, որն որ պատրաստուել է ընծայն բերելու, կերթայ խորհրդանոցի մօտ կը խնկարկէ և ապա քշոցներով և մոմեղէններով մասն

կամ ընծայն այսինքն հացն ու գինին կը բերուի և կը մատուցանուի ժամարարին, կամ նոյն ինքն ժամարարն կերթայ և կը վերարերէ. յետոյ սուրբ պատարագի սպասը կամ ընծայն ժամարար քահանայն կառնէ և կը դնէ սեղանին վերայ և կը մատուցանէ Հօր Աստուծոյ, և շնորհիւ սրբոյ պատարագին զանազան խնդրուածքներ և հայցուածքներ կանէ վասն խաղաղութեան աշխարհի, թողութեան և քաւութեան յանցանաց, և փրկութեան հոգւոց հաւատով ննջեցելոց։

ՊԱՏԱՐԱԳ ՀԱՒԱՏԱՑԵԼՈՅ

ԳԼՈՒԽ Գ.

Հ. Ի՞նչ խորհուրդ ունի վերարերումն.

Պ. Վերարերումն կը նշանակէ Քրիստոսի Տեառն մերոյ աշխարհիս երեսը շրջելը և աշխարհ գալը երկնքէն և մարդկանց ու Աստուծոյ մէջ հաշտութիւն ձգելը։ Հացն ու գինին, բահանայն որ սարկաւագին ձեռքէն կառնէ կը դնէ սեղանին վերայ և իրրև ընծայ և նուէր հաշտութեան կը մատուցանէ Հօր Աստուծոյ։ Այս միջոցին կը երգէ սարկաւագը կամ վերարերողը «որք զքրոբէիցն խորհրդարար կերպարանիմք» այսինքն կնշանակէ թէ երկնային հրեշտակներու կամ Քէրոբէներուն պէս մենք ալ սպասաւորութիւն կանենք աստուծոյ։ Քահանայն սպասը սեղանին վե-

ըայ դնելէն յետոյ և ծածուկ աղօթքը կարդալէն ետքը մատերուն ծայրը կը լուանայ։

Հ. Ի՞նչ կնշանակէ մատերուն ծայրը լուանալը.

Պ. Մատերուն ծայրը լուանալը կնշանակէ մարդկային բնութեան մաքրութիւնը յամենայն արտաքին աղտերէ և այնպէս մաքուր ձեռքով շօշափել Քրիստոսի մարմինը. ինչպէս որ ինքն Քրիստոս Տէրն մեր սուրբ պատարագի խորհուրդն հաստատելէն առաջ վերնատան մէջ աշակերտաց ոտքը լուաց, որ մաքրուին ամեն աղտեղութիւններէ և ապա կատարեց սուրբ պատարագին խորհուրդը։ Դարձեալ՝ յայտնի ըլլայ ժողովրդոց, որ նոքա ևս պէտք է արտաքին աղտերէն մաքրուին և սրբանան և այսպէս մաքրութեամբ մերձենան Աստուածային խորհրդոյն։

Հ. Ի՞նչ կնշանակէ «Եւ ևս հաւատով և սրբութեամբ կացցուք» քարոզը։

Պ. Կնշանակէ այն, որ սարկաւագը, իբրև թարգման ժողովրդեան ըերնէն կը յորդորէ մեզի պատարագի ժամանակ աղօթք անել և հաստատուն հաւատով խնդրել Աստուածային շնորհքը և ամենևին չի դայթակղիլ իւրեան մտքի մէջ՝ այլ հաստատ մնալ առանց խորամանկութեան կամ խարեբայութեան և ամենևին թերահաւատ չլինել՝ այլ պարզ մտքով հաւատալ սուրբ Երրորդութեանը Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, Քրիստոսի անօրէնութեան խորհուրդներուն և միւսանգամ գալստեան Փրկչին մերոյ. ասկից ետքը դպիրները պատասխանելէն յետոյ սարկաւագը կասէ «ահիւ կացցուք, երկիւղիւ կացցուք, բարւոք կացցուք և նայեցարուք զգուշութեամբ» այսինքն՝ աչքերդ դէպի սեղանը թող ըլլայ և դէպի ընծայն, ուրտեղէն որ կապասենք Աստուծոյ շնորհքը։

Հ. Ինչո՞ւ սպասը վերարերելէն ետքը քահանան աղօթքը

կը դարձնէ առ Հայրն Աստուած։

Պ. Պատճառ, որ Որդւոյն Աստուծոյ մարմինը և արիւնը կը մատուցանուի իբրև նուէր կամ ընծայ Հօր Աստուծոյ, վասն զի Որդին Աստուած աշխարհ գալով մարդկանց համար չարչարուեցաւ, խաչուեցաւ և եղաւ նուէր ի վերայ խաչին և այն իրեն խաչելութեամբը և չարչարանքովը ազատեց մեզի Ադամային մեղքէն։ Ուրեմն պէտք է որ քահանան աղօթք արած ժամանակը ջերմեռանդ սրտիւ մատուցանէ Հօր Աստուծոյ հացն ու բաժակը ի քաւութիւն և ի թողութիւն մեղաց մերոց։

Հ. Ի՞նչ կնշանակէ միմեանց ողջոյն տալը.

Պ. Կնշանակէ համբոյր սրբութեան, այսինքն մէկզմէկու համբուրել ճշմարիտ սրտիւ և ոչ լրբութեամբ, որովհետև մարմնաւոր կերպիւ իրարու համբուրելով հոգեոր սիրով ալ կը կապուինք իրարու հետ և կմիանանք իրարու մի անձն և մի սիրտ և այսպէս սրբութեամբ կը հաղորդիմք միաբան ի կենարար մարմնոյ և արեան Տեառն։ Իսկ անոնք, որոնք ապաշխարանքի տակ են պէտք է դուրս ելնեն եկեղեցուց կամ դաւիթը կանգնեն ու աղօթեն և իրենց մեղացը թողութիւն գտնելէն ետև արժանանան միանալու ընդ միւս եղբարս և այնպէս հաղորդուին ի սուրբ խորհրդոյն մարմնոյ և արեան Տեառն։

Հ. Ի՞նչ կնշանակէ «ահիւ կացցուք, երկիւղիւ կացցուք» քարոզը.

Պ. Կնշանակէ որ Քրիստոս ինքն է պատարագը, անոր համար պէտք է որ ամենայն ապաշխարողները կամ անմաքուր մարդիկները և մեղաւորները չի մօտենան չի մերձենան սուրբ խորհրդոյն և վախով ու դողով կանգնեն առաջի սուրբ պատարագին, սկզբէն մինչև վերջը և անոնք միայն հաղորդուին ի սուրբ խորհրդոյն. որոնք որ առաջուա-

նէ իրենց մեղքերը խոստովանած և ապաշխարած են։ Սորանէ ետքը սարկաւագը կը քարոզէ «զգրունս զգրունս« և այլն և այդ ժամանակ քահանայ ծածուկ աղօթք կը կարդայ և կը պատրաստուի «Առէք կերէք»ի կամ սուրբ սուրբի խորհրդոյն և սկիզբն առնելոյ սուրբ պատարագին էական խորհրդոյն։

Հ. Ի՞նչ է սուրբ սուրբ երգը և ինչ խորհուրդ ունի.

Պ. «Սուրբ սուրբ» երգն է պատարագին կէսէն յետոյ կատարուած էական խորհուրդը, այսինքն Քրիստոսի Տեառնը մերոյ հաստատած կամ կատարած վերնատան մէջ պատարագի խորհուրդը. դպիրքը «սուրբ, սուրբ» երգը լմնցնելէն յետոյ քահանայն ձեռքը կառնու հացն կամ սպասն, կը բարձրացնէ և բարձր ձայնիւ կասէ. «առէք կերէք այս է մարմին իմ» ինչպէս որ Քրիստոս Տերն մեր ասաց առաքելոց։ Նոյնպէս ձեռքն կառնու սկիհը գինիով կամ բաժակը և բարձրացնելով կասէ «արբէք ի սմանէ ամենեքեան այս է արիւն իմ նորոյ ուխտի» և այլն։

Հ. Ի՞նչ է «ամէն հայր երկնաւոր» երգը.

Պ. «Ամէն հայր երկնաւոր» երգը դպիրքը կերգեն սուրբ սուրբէն յետոյ ի դէմս Հօր Աստուծոյ և խնդրուածք կանեն որ սուրբ պատարագի շնորհիւն և սուրբ մարմնոյ և արեան շնորհիւն պարգևէ Աստուած ժողովրդեան Աստուածային ողորմութիւնը և այդ միջոցին քահանան ծածուկ աղօթքը կը քաղէ համաձայն դպրաց երգին և ապա սկիհն ձեռքն առնելով կը մատուցանէ Հօր Աստուծոյ և կասէ. «և զքոյս ի քոյոց քեզ մատուցանեմք» և ապա կը շարունակէ իւր աղօթքը։

Հ. Ի՞նչ կնշանակէ «և զքոյս ի քոյոց քեզ մատուցանեմք» աղօթքը.

Պ. Կնշանակէ որ Քրիստոս մարմինը և արիւնը—հացն ու

գինին, որ է փոխանակ մարմնոյ և արեան Քրիստոսի կը մատուցանէ Հօր Աստուծոյ և որովհետև պատարագն ինքն է Քրիստոս որդին Աստուծոյ, անոր համար Հօր Աստուծոյ կասենք «և զքոյս ի քոյոց քեզ մատուցանեմք»։

Հ. Ասկից վերջը ի՞նչ խորհուրդ կայ.

Պ. Ասկից յետոյ դպիրքը կերգեն «Որդի Աստուծոյ» երգը, որոյ մէջ կը պարունակուի Քրիստոսի Տեառն մերոյ մեղի համար խաչուիլը և արիւն հեղուլը, ևս և պատարագի խորհուրդը մեղի համար յիշատակ թողուլը։

Հ. Ի՞նչ կնշանակէ քահանային հացին ու գինիին վերայ խաչակնքելը.

Պ. Մինչև ցայս կէտս հացն ու բաժակն օրինակ էր Քրիստոսի մարմնոյ և արեան, բայց այժմ պատարագիչը կը խնդրէ սուրբ հոգւոյն շնորհքը, որ սրբագործէ ճշմարտապէս ի մարմին և յարիւն Քրիստոսի և կը խաչակնքէ յատուկ հացին և գինւոյն վերայ և ապա երկուսն ի միասին ձեռքն կառնու և կը խաչակնքէ. սորանից յետոյ ընծայն կըլլայ իսկական մարմին և արիւն Քրիստոսի, յետոյ պատարագիչն կասէ ձայնիւ այս աղօթքը. «որպէս զի եղիցի սա ամենեցուն մեզ մերձեցելոցս յանդատապարտութիւն, ի քաւութիւն և ի թողութիւն մեղաց»։

Հ. Ասկից ետքը ի՞նչ կերգեն.

Պ. Կերգեն «Հոգի Աստուծոյ» որին մէջ կը խնդրուի վասն կենդանեաց և մեռելոց և այլ խնդրուածք, որ ժամաբար քահանան ծածուկ աղօթքը խալսելէն ետքը, Աստուածածնի և Յովհաննու Մկրտչի և ամենայն սրբոց անունները կը յիշատակէ և ապա սարկաւագը կուգայ սեղանին աջակողմը ու «առաքելոց սրբոց, մարգարէից» քարոզը կը կարդայ ձայնիւ և ապա ժամաբարը կը յիշէ թադաւորի, կաթուղիկոսի և առաջնորդի անունքը, նորա խալ-

սելէն եաքը, սարկաւագն կանցնի սեղանոյն ձախակողմը և կերգէ ձայնիւ «Գոհութիւն և փառաբանութիւն» քարոզը վասն կենդանեաց։

Հ. Գոհութենէն յետոյ ինչ կերգեն.

Պ. Գոհութենէն յետոյ կերգեն «ամենայն սրբովք, զորս յիշատակեցաք» քարոզը, այսինքն անոնց, որոնց անունները յիշուեցաւ սուրբ պատարագին մէջ, որպէս զի անոնց ալ բարեխօս բռնենք և այս քարոզէն եաքը ժամարարն կասէ. «և տուր մեզ համարձակաձայն բարբառով երգել և ասել» աղօթքը, այս ժամարարին ձայնիւ աղօթքէն եաքը կասեն բարձր ձայնիւ—«Հայր մեր»ն։

Հ. Ինչու համար «Հայր մեր»ը կերգուի պատարագի մէջ.

Պ. Անոր համար, որ «Հայր մեր»ն ձայնիւ միտրան ի բերանոյ ժողովրդոյ պէտք է երգուի, որոյ մէջ է մեր բոլոր խնդրուածքը, այսպէս ժամարարին բերանովը Հօր Աստուծոյ կը խնդրենք, որ ամենայն չարէ ու փորձանքէ մեզի հեռու պահէ. հայր մերը կասեն դպիրները, բայց նորա վերջաբանութիւնը ժամարարի բերնովն կաւարտուի, որ է «զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս, ամէն». ասկից յետոյ ժամարարը խաղաղութիւն կուտայ ժողովրդոյ և ժողովրդոյ բերնէն դպիրները կասեն «Եւ ընդ հոգւոյդ քում» և «Առաջի քո տէր», յետոյ կը համբուրէ սուրբ սեղանը և ընծայն ու կասէ. «Յիսուսիս, Քրիստոսիս Տէրամբ մերով» և սարկաւագն կասէ «պռօսխումէ» և ապա ժամարարն հացն ու գինին կը բարձրացնէ ժողովրդեան ի տես և կասէ «ի սրբութիւն սրբոց» և ժողովուրդը դըզբայ բերնով կերգեն «միայն սուրբ միայն տէր, Յիսուս Քրիստոս ի փառս Աստուծոյ Հօր, ամէն» և ապա կերգեն «Ամէն հայր սուրբ, Որդիդ սուրբ, Հոգիդ սուրբ» և այլն, դարձեալ կերգեն դպիրները ի բերանոյ ժողովրդոյ։

Հ. Ի՞նչ կնշանակէ ասկից եաքը քահանային խոնարհիլը և այնպէս աղօթելը։

Պ. Քահանային խոնարհիլը կնշանակէ, որ Քրիստոս Տէրն մեր աշխարհ եկաւ, մարդկային ազգը փրկելու և մեզի համար պատարագեցաւ ի վերայ խաչին և այժմ ևս ամենայն ժամանակ պատարագին խորհուրդը կատարած ատենը նոյն շարչարանքը կը յիշենք և միտքերս կը բերենք և կը խնդրենք որ մենք ալ արժանի ըլլանք հաւատով և յուսով զՔրիստոսի Տեառն մերոյ մարմինը և արիւնը ճաշակելու, և երկնից արքայութեանը արժանանալու։

Հ. Ի՞նչ կնշանակէ «Քրիստոս պատարագեալ» երգը.

Պ. Այն որ արժանաւորներն յառաջ կուգան և սարկաւագի վարագոյրը բանալուն և «երկիւղիւ և հաւատով» քարոզը ասելուն կը սպասեն «Քրիստոս պատարագեալ» երգին մէջը կը պարունակուի այն խօսքերը. որոնք որ ամեն հաղորդուողներուն հարկաւոր է իմանալ իբրև նախապատրաստական աղօթք։

Հ. Սարկաւագին «երկիւղիւ և հաւատով քարոզը ինչ է.

Պ. Այն է որ կասէ. «երկիւղիւ և հաւատով առաջ արիք և սրբութեամբ հաղորդ առէք». ասոր դէմ դպիրները ժողովրդոց բերանէն կը պատասխանեն «Աստուած մեր և Տէր մեր երևեցաւ մեզ, օրհնեալ եկեալ անուամբ տեառն» և այս ասելէն եաքը ճաշակուելու մարդիկը կը մօտենան և կը հաղորդուին։

Հ. Ճաշակելու ժամանակ դպիրները ինչ կերգեն.

Պ. Կերգեն ըստ պատշաճին շարական, կամ տաղ և կամ սաղմոս, եաքը քահանայն կը բարձրացնէ սկիհը և կասէ «Կեցո Տէր, զժողովուրդս քո և օրհնեա զժառանգութիւնս քո» և այլն. ասկից եաքը դպիրները կերգեն «Լցաք ի բարութեանց» երգը և քահանայն սեղանի մօտ աւարտելով

23127

իր աղօթքը և լուացումը, կսպասէ որ դպիրքն «Լցաք ի բարութեանց» և «Գոհանամք» երգերը վերջացնեն և յետոյ Աւետարանը ձեռքը բեմէն ցած կուգայ «որ օրհնես զայնո-սիկ» ասելով, վերջի Աւետարանը կը կարդայ և ապա «օրհնեալ եղերուք» ասելով կարձակէ:

ՎԵՐՋ

29127